№ 19. ՄԱՅԻՍԻ 27 (ՅՈՒՆԻՍԻ 8) 1876 ՄԱՅԻՍԻ 27 (ՅՈՒՆԻՍԻ 8). № 19.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ցատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ.»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կանոնաւոր զարգացման արգելքները։—Ներքին տեսութիւն։ Ջրանցքի խնդիրը։ Լօչինօի երկրագործական ուսումնարանը։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Սպանիա։ Իտալիա։ Անգլիա։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Գերմանիայից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Ֆելիէտօն։

ԿԱՆՈՆԱՒՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

—

Հիւսիսային Ամերիկայի հանրապետութիւնը նորանով մեծ է, նշանաւոր է, որ ամերիկեան ազգի ընդհանուր զարգացման գործի մէջ հաւասարապէս մասնակցում են ժողովրդի ամեն դասակարգերը։ Ամերիկեան ազգութիւնը մեզ զարմացնում է այն հրաշալի երևոյթով, որ այնտեղ միշտ և անդադար երևան են գալիս թարմ ոյժեր, որ ազգութեան գործունեութիւնները երբէք չեն սպառվում, այլ անդադար նորոգվում են հասարակութեան միջին և ստորին դասակարգերից քաղելով միշտ նորոգիչ, առաջ մղող ընդունակութիւններ.... Ամբոխի անսպառելի հանճարը, իր թարմ, ստեղծագործական ոյժով, անդադար նորոգում է հասարակութեան բարձր դասակարգերի, հետզհետէ անշարժութեան և մտաւոր անբերութեան մէջ ընկնող գործունեութիւնները։

Այդ տեսակ հասարակութիւն միշտ առաջադէմ կը լինի։

Ընդհակառակն այն հասարակութիւնների մէջ, որտեղ ստորին և միջին դասը մի անդունդով բաժանված է հասարակութեան բարձր դասակարգից,—այդ տեսակ հասարակութիւնների մէջ անկարելի է սպասել կանոնաւոր հասարակական զարգացում, մշտական կանոնաւոր առաջադիմութիւն....

Այդ անդունդը, հասարակութեան զարգացման այդ արգելքները սրանք են՝ նախապաշարմունքներ, աղքատութիւն և ամենքին հաւասարապէս ուսմանն ու կրթութեանը հասնելու դժուարութիւն....

Այդ տեսակ հասարակութեան մէջ, որտեղ հասարակական կեանքի դոյութեան համար զէնքերը այլ և այլ դասակարգերի մէջ անհաւասար են, որտեղ մի կողմ կայ հարստութիւն, լուսաւորութիւն և նոր սերունդի համար ուսմանը և կրթութեանը հասնելու հեշտութիւն, իսկ միւս կողմ՝ աղքատութիւն, նախապաշարմունքներ և ուսմանը ու կրթութեանը հասնելու ամեն տեսակ դժուարութիւններ և արգելքներ,—այդ տեսակ հասարակութեան կենսական զարգացման մէջ ի հարկէ միշտ յաղթող կը հանդիսանայ հարուստ դասը և երբէք այդ դասի քնած, անշարժ, հետզհետէ մտաւոր անբերութեան մէջ ընկնող, սպառվող ոյժերը չեն նորոգվի ամբոխի կենսական հանճարի հոսանքով, որ ամեն ազգի մէջ միակ աղբիւրն է կենսական և հասարակական մշտական վերանորոգման....

Ի՞նչ օգուտ է մի հասարակութեան, որ միայն նիւթապէս ապահոված դասակարգին մատչելի է հիմնաւոր ուսումը։

Ի՞նչ օգուտ է մի հասարակութեան, որ միայն հարուստ ապահոված դասակարգին հնարաւոր է առանց որ և է արգելքի բաղմացնել զաւակներ թէ ամուսնութեան միջոցով և թէ ամուսնութենից դուրս։

Այդ տեսակ դրութեան հետևանքն այն է, որ հասարակութեան թէ մտաւոր, թէ ֆիզիկական ոյժերը երբէք չեն նորոգվում. դասակարգերի այդ տեսակ անհաւասար յարաբերութիւնների հետևանքն այն կը լինի, որ հասարակութեան մէջ միշտ կը տեսնէք մտաւոր միակողմանի մտածողներ, մտաւոր անշարժութիւն, իսկ ֆիզիկական կողմից կը յայտնվի նորա մէջ նոր սերունդի հետզհետէ թուլանալու երևոյթը....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՐԱՆՑՔԻ ԽՆԴԻՐԸ

—

Կրկին յարուցված է ջրանցքի խնդիրը Թիֆլիսում։ Այդ խնդիրը մշակելու համար Դումայի ձայնաւորներից նշանակված մասնաժողովը ներկայացրեց իր զեկուցումը Դումայի ընդհանուր ժողովին։ Երբ որ մենք սրանից շատ ժամանակ առաջ այն միտքն էինք յայտնում, թէ ջրանցքը առհասարակ այնպիսի մի ձեռնարկութիւն է, որ մի քաղաքի ազգաբնակութեան համար առաջին պիտոյք ներկայացնելով, չէ կարող շահաւէտ ձեռնարկութիւն լինել,—մեզ հետ չէին համաձայնվում։ Ուրիշ բան է, եթէ ջրանցքի հետ միասին կիրագործվի, օրինակ, և գազի լուսաւորութիւնը.... Ջուրը առաջին հարկաւորութեան առարկայ լինելով, նրանից շահ սպասել չէ կարելի և չը պէտք է, իսկ գազը աւելի շռայլութեան առարկայ լինելով, կարող է ձեռնարկողին մեծ նիւթական շահ ներկայացնել։ Այդ պատճառով եթէ ջրանցքը առանձին է շինվում, առանց գազի, լաւ է որ այդ ձեռնարկութեան իրագործելը ինքն քաղաքը յանձն առնէ, և չը տայ մասնաւոր մի ձեռնարկողին, որովհետև մասնաւոր ձեռնարկողը միշտ իր անձնական նիւթական շահ կը որոնէ ամեն ձեռնարկութենից։

Մենք միշտ առաջարկում էինք որ Թիֆլիսը ինքն յանձն առնէ ջրանցքի շինելը, և ոչ թէ կոնցէսիայով տայ քաղաքի համար այդ օգտաւէտ և բնակիչներին անհրաժեշտ հիմնարկութիւնը։ Այժմ ջրանցքի խնդիրը մշակելու համար նշանակված մասնաժողովը աննկատելի կերպով հասնում է նոյն եզրակացութեան, որին և մենք էինք հասած սրանից մի քանի տարի առաջ։

Մենք առաջարկած էինք ջրանցք իրագործելու համար քաղաքային փոխառութիւն անել...

Այժմ մասնաժողովը առաջարկում է իր զեկուցումի մէջ հետևեալը՝ հրաւիրել մասնագէտ մարդկանց ջրանցքը շինելու համար, որք կը պարտաւորվին շինած ջրանցքը առաջուց որոշված ժամանակամիջոցին պահպանել, իսկ քաղաքը իր կողմից իր իշխանութեան տակն ունելով ջուրը քաղաքացիներին բաժանելու իրաւունքը, պարտաւորվում է իւրաքանչիւր տարին վճարել ջրանցք կառուցանողներին՝ ա.) ծախս արած դրամագլխի և նրա հանգցնելու վրա տոկոսներ և բ.) որոշ գումար ջրանցքը պահպանելու և նորան վերաբերեալ ընթացող ծախսերը ծածկելու վրա։

Ուրեմն մասնաժողովը աննկատելի կերպով մի և նոյն եզրակացութեանն է գալիս, որին և մենք սրանից շատ առաջ հասած էինք։ Նա իսկապէս առաջարկում է որ քաղաքը ինքն ջրանցք շինէ, միայն այն զանազանութեամբ որ մենք առաջարկած էինք մի օրինաւոր և կանոնաւոր քաղաքային փոխառութիւն անել, իսկ մասնաժողովը կամենում է գտնել մի մասնաւոր անձն, որ լինի տեխնիկ-մասնագէտ, մի և նոյն ժամանակ ջրանցքի շինութիւնը յանձն առնէ և քաղաքին էլ իրանից մի գումար փոխ տայ, որի տոկոսները քաղաքը հետզհետէ կը վճարէ....

Այսպիսով մասնաժողովը կամենում է որ մի մասնաւոր անձն լինի մի և նոյն ժամանակ՝ և բանկ քաղաքի համար և նրա ջրանցքի շինութեան կապալառու....

Բայց այդ տեսակ անձն հաղիւ թէ կը գտնվի....

Այդ նշանաւոր խնդրի վրա մենք կրկին առիթ կունենանք խօսելու։

Գ. Ա.

ԼՕՉԻՆՕԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

—

Թիֆլիսից 18 վերստ հեռու գտնվում է մի երկրագործական ուսումնարան, Լօչինօի մէջ։ Այդ ուսումնարանի ինչ լինելը շատ քիչ յայտնի է ձեր ընթերցողներին։ Կաշխատեմ ուրեմն կարճ տեղեկութիւններ տալ նորա մասին, որքան կը ներէ լրագրական յօդվածի սահմանը։

Մայիս ամսին հարցաքննութիւններ կային այդ ուսումնարանի մէջ։ Մէկ օրվայ մէջ երկու դասատուն է հարցաքննվում։ այդ կատարվում է բոլորովին նոր մանկավարժական ձևով։ 7 ժամվայ ընթացքում 37 աշակերտներ 26 առարկաներից են հարցաքննվում։ Մի փոքրիկ սենեակի մէջ դիզված են ուսուցիչները և աշակերտները. ամեն մի ուսուցչի մօտ երկու աշակերտ են կանգնած և երկուսն էլ պատասխանում են հարցերին։ Այդ ժամանակ, ամենքի միասին խօսելուց այնպիսի աղմուկ և շփոթ է լինում,—որ ոչ աշակերտն է լսում ինչ որ ուսուցիչը հարցնում է, ոչ էլ ուսուցիչը կարող է լսել աշակերտի պատասխանը։ Եւ ահա այդ նոր ձևի բաբէլօնեան խառնակութեան մէջ վերջանում է հարցաքննութիւնը... Բոլոր աշակերտներից ցոյց տուած առաջադիմութիւնները բոլորովին միմեանց հաւասար են յայտնվում՝ օրինակ այն աշակերտը որ 2 թւանշանը չէ կարողանում 2-ի վրա բազմապատկել, նոյնքան առաջադէմ է ճանաչվում ուսուցչական խորհրդից, որքան այն աշակերտը որ ամբողջ ուսումնական տարվայ ընթացքում յայտնի էր որպէս ամենաաշխատասէր և ամենահասկացող աշակերտ.... Պէտք է խոստովանեմ, թէ ես իմ կեանքումս ոչ թէ միայն այդ տեսակ հարցաքննութիւն տեսած չեմ, բայց և սորա նման հարցաքննութիւն երբէք երևակայել չէի կարող։

ՖԵԼԻԷՏՕՆ

Թիֆլիսի ընտրութիւնները։—Վրացիք և հայեր։—Ազնուականների բանկ և Ներսիսեան դղեակի հոգաբարձուներ։—Մի ռամիկ մարդու հարցմունքը։—Ջրանցքը։—Հայոց Թատրոն և նորա լաւ յատկութիւններից մինը։—Հայոց Թատրոնը չորացել է։—Մայիս ամսի շոքերը։—Մեր լաւ հասարակութիւնը։—Հայոց ժողովուրդը Փոքր-Ասիայում։—Ռուս լրագիրներ։—Հայերի անհոդութիւնը։—Իմ հոգու տխուր տրամադրութիւնը։—Կ. Պոլսից ստացած հեռագիրը և Թիւրքիայի սահմանադրութիւնը։

—

Վերջին օրերը Թիֆլիսը զբաղված էր ընտրութիւններով... Վրաց ազնուականները ընտրութիւններ էին անում իրանց կալուածական բանկի մէջ։ Վրաց «Դրօէբա» և ռուս «Тифлисскій Вѣстникъ» սաստիկ ագիտացիա էին անում որ բանկի վարչութեան անդամները փոխվեն,—բայց դարձեալ ընտրվեցան նոյն մարդիկ։ Ազնուականների ժողովի մէջ հաւաքվեցան Թիֆլիսի նահանգի դաւառներից գիւղական ազնուականները։ Նստերը աղմկալի էին՝ ամենքը միասին էին խօսում, բղավում, գոռում... Ազնուականներից մինին հարցրին թէ ինչի նա այսքան աղմուկ է անում, անդադար խօսում, ամենքի բերանից խօսքերը խլում,—«Վա՛յ, պատասխանում է ազնուականը, բաս ինչի՞ եմ եկել հեռուից... գոնէ իրաւունք էլ ունենամ չատ խօսելու։—Բայց այդքան խօսելուց բան չը հասկացանք,—«Ես ուզում եմ խօսել, խօ լուռ կենալու համար չեմ եկել հեռու գիւղից այստեղ, ու այսքան ծախս արել... Ես չեմ կարող չը խօսել, իսկ յետոյ ինչպէս ուզում էք վճռեցէք...»

Հայերի ժողովները այդպէս չեն։ Այնտեղ քիչ են խօսում, բայց գործ են կատարում և լաւ են պատրաստվում ընտրութիւններին։ Ընտրութիւններից առաջ մինչև անգամ ծրարների մէջ թէ իրանց, թէ հակառակ կուսակցութեանը հրաւէրներ և կանդիդատների ցուցակ են ուղարկում...

Մի ռամիկ մարդ, տեսնելով թէ ինչպէս ամեն մէկը անպատճառ աշխատում էր հոգաբարձու դառնալ, հարցնում էր ինձ՝ «Երանի՞ խմանայի, ինչ են այսքան գլխները կոտրում հոգաբարձու լինելու համար, չը լինի՞ թէ ուսումնարանում փող ուտելու կայ...»—ոչ, պատասխանեցի ես, փող ուտելու չը կայ, բայց եթէ գլխները կոտրում են հոգաբարձու լինելու համար, այդ դրա համար է, որ օգնեն բարեկամներին, իրանց կուսակցութեան մարդիկներին, որոնք ուսումնարանում պաշտօն ունեն՝—տեսչին կամ վարժապետներին վտանգ էր սպառնում արձակված լինելու, ուրեմն այսպիսիների համար դա կեանքի ու մահվան հարց է... Պէտք է հոգաբարձու մտնել, դրանց իրանց պաշտօններում պահպանելու համար։

Հայերը ուրեմն վրացիներից աւելի գործնական ժողովուրդ են՝ նոքա քիչ են խօսում, բայց գործ են կատարում...

Բացի ընտրութիւններից վերջին օրերը մեր ներքին հարցերի մէջ ամենագլխաւորներից մէկն էր Թիֆլիսի Ջրանցքի խնդիրը։ Հասկանալի է որ այդ շրջերում ամենքն այդ հարցով հետաքրքրվումեն։ Թողը անտանելի է մեր քաղաքում, ոչինչ հովացնող միջոցներ չունենք, բուսականութիւնը չատ աղքատ է մեզանում, այնպէս որ իմ կարծիքով չատէ քաղաքում եղած փոքրաթիւ ծառերն էլ խնայել՝ լաւ է բոլորը ոչնչացնենք, այդիները կտրենք, ծառերը այրենք... Ոչնչացնենք վերջապէս բուսականութեան այդ վերջին նշոյլներն էլ մեզանում....

Գոնէ մի տաս կամ մինչև անգամ հինգ տարի առաջ մենք մի չատ հեշտ միջոց ունէինք քաղաքում անձրև պատճառելու՝ բաւական էր խնդրել հայ-թատրոնասէրների խումբը որ հայերէն ներկայացումն տան,—և ճշմարիտ, հենց որ երևում էին քաղաքիս տների պատերի վրա հայոց ներկայացման յայտարարութիւնները,—իսկոյն գալիս էր սաստիկ անձրև և հովացնում էր օդը... Իսկ այժմ երկինքն էլ խռովել է մեր խեղճ հայոց Թատրոնի դէմին... Հայոց Թատրոնի այդ անձրևային յատկութիւնը առաջ այնքան մեծ էր, որ ես մի անգամ նպատակ ունէի ֆելիէտոնիս միջոցով առաջարկել Թիֆլիսի դումային փոխանակ օտարազգի մասնագէտներին կանչել մեզանում ջրանցք շինելու համար, նպաստել քաղաքային փողերով Թիֆլիսում հայոց Թատրոն շինելու կամ գոնէ այդ միջոցներով հայոց ներկայացումները պահպանելու... Բայց այժմ էլ չէ կարելի այդ տեսակ բան առաջարկել, որովհետև հայոց Թատրոնը այն օրից կրթ միացել է վրաց Թատրոնի հետ՝ չորացել է, կորցրել է իր միակ գովելի յատկութիւնը՝ քաղաքիս մէջ և նրա շրջականներում անձրև յարուցանելու...

* * *

Մայիսի վերջն է, իսկ չոքը Թիֆլիսում յուլիսի չոքի նման է։ Լաւ հասարակութիւնը չատապում է հեռանալ քաղաքից՝ մի քանիներ գնում են ամառանոց, միւսները արտասահման։ Ամեն մարդ ով կարող է, իր վրա է մտածում,—բայց կան մարդիկ, որք չեն էլ կարող իրանց վրա մտածել։

Մինչև որ Թիֆլիսի լաւ հասարակութեան հայերը և հայուհիք հոգում են իրանց անձի մասին,—ինչ են անում նրանց խեղճ հայրենակիցները Փոքր-Ասիայում... Թշուառ, քաղցած, հարստահարված, ստրուկ... Երկու միլիոն հայոց ժողովուրդ այնքան ըմբացրած, ճնշված, ստրկացած է, որ ընդունակութիւն էլ չունի բողոքելու։

Վեր առէք մի ռուս լրագրի առաջին պատահած համարը,—և կը տեսնէք որ նրա էջերը լցված են զանազան նուիրատուութիւններով յօդուտ իրանց չքաւոր, հիւանդ և վիրաւորված ցեղակիցների, սլավօնացիների,—իսկ մեր հայոց հասարակութիւնը ինչ է անում իր խեղճ, ողորմելի, ատելի հասարակական կուլի դոյութեան համար զէնքերը այլ և այլ դասակարգերի մէջ անհաւասար են, որտեղ մի կողմ կայ հարստութիւն, լուսաւորութիւն և նոր սերունդի համար ուսմանը և կրթութեանը հասնելու հեշտութիւն, իսկ միւս կողմ՝ աղքատութիւն, նախապաշարմունքներ և ուսմանը ու կրթութեանը հասնելու դժուարութիւններ և արգելքներ,—այդ տեսակ հասարակութեան կենսական զարգացման մէջ ի հարկէ միշտ յաղթող կը հանդիսանայ հարուստ դասը և երբէք այդ դասի քնած, անշարժ, հետզհետէ մտաւոր անբերութեան մէջ ընկնող, սպառվող ոյժերը չեն նորոգվի ամբոխի կենսական հանճարի հոսանքով, որ ամեն ազգի մէջ միակ աղբիւրն է կենսական և հասարակական մշտական վերանորոգման....

Ի՞նչ օգուտ է մի հասարակութեան, որ միայն նիւթապէս ապահոված դասակարգին մատչելի է հիմնաւոր ուսումը։

Ի՞նչ օգուտ է մի հասարակութեան, որ միայն հարուստ ապահոված դասակարգին հնարաւոր է առանց որ և է արգելքի բաղմացնել զաւակներ թէ ամուսնութեան միջոցով և թէ ամուսնութենից դուրս։

Այդ տեսակ դրութեան հետևանքն այն է, որ հասարակութեան թէ մտաւոր, թէ ֆիզիկական ոյժերը երբէք չեն նորոգվում. դասակարգերի այդ տեսակ անհաւասար յարաբերութիւնների հետևանքն այն կը լինի, որ հասարակութեան մէջ միշտ կը տեսնէք մտաւոր միակողմանի մտածողներ, մտաւոր անշարժութիւն, իսկ ֆիզիկական կողմից կը յայտնվի նորա մէջ նոր սերունդի հետզհետէ թուլանալու երևոյթը....

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋՐԱՆՑՔԻ ԽՆԴԻՐԸ

—

Կրկին յարուցված է ջրանցքի խնդիրը Թիֆլիսում։ Այդ խնդիրը մշակելու համար Դումայի ձայնաւորներից նշանակված մասնաժողովը ներկայացրեց իր զեկուցումը Դումայի ընդհանուր ժողովին։ Երբ որ մենք սրանից շատ ժամանակ առաջ այն միտքն էինք յայտնում, թէ ջրանցքը առհասարակ այնպիսի մի ձեռնարկութիւն է, որ մի քաղաքի ազգաբնակութեան համար առաջին պիտոյք ներկայացնելով, չէ կարող շահաւէտ ձեռնարկութիւն լինել,—մեզ հետ չէին համաձայնվում։ Ուրիշ բան է, եթէ ջրանցքի հետ միասին կիրագործվի, օրինակ, և գազի լուսաւորութիւնը.... Ջուրը առաջին հարկաւորութեան առարկայ լինելով, նրանից շահ սպասել չէ կարելի և չը պէտք է, իսկ գազը աւելի շռայլութեան առարկայ լինելով, կարող է ձեռնարկողին մեծ նիւթական շահ ներկայացնել։ Այդ պատճառով եթէ ջրանցքը առանձին է շինվում, առանց գազի, լաւ է որ այդ ձեռնարկութեան իրագործելը ինքն քաղաքը յանձն առնէ, և չը տայ մասնաւոր մի ձեռնարկողին, որովհետև մասնաւոր ձեռնարկողը միշտ իր անձնական նիւթական շահ կը որոնէ ամեն ձեռնարկութենից։

Մենք միշտ առաջարկում էինք որ Թիֆլիսը ինքն յանձն առնէ ջրանցքի շինելը, և ոչ թէ կոնցէսիայով տայ քաղաքի համար այդ օգտաւէտ և բնակիչներին անհրաժեշտ հիմնարկութիւնը։ Այժմ ջրանցքի խնդիրը մշակելու համար նշանակված մասնաժողովը աննկատելի կերպով հասնում է նոյն եզրակացութեան, որին և մենք էինք հասած սրանից մի քանի տարի առաջ։

Մենք առաջարկած էինք ջրանցք իրագործելու համար քաղաքային փոխառութիւն անել...

Այժմ մասնաժողովը առաջարկում է իր զեկուցումի մէջ հետևեալը՝ հրաւիրել մասնագէտ մարդկանց ջրանցքը շինելու համար, որք կը պարտաւորվին շինած ջրանցքը առաջուց որոշված ժամանակամիջոցին պահպանել, իսկ քաղաքը իր կողմից իր իշխանութեան տակն ունելով ջուրը քաղաքացիներին բաժանելու իրաւունքը, պարտաւորվում է իւրաքանչիւր տարին վճարել ջրանցք կառուցանողներին՝ ա.) ծախս արած դրամագլխի և նրա հանգցնելու վրա տոկոսներ և բ.) որոշ գումար ջրանցքը պահպանելու և նորան վերաբերեալ ընթացող ծախսերը ծածկելու վրա։

Ուրեմն մասնաժողովը աննկատելի կերպով մի և նոյն եզրակացութեանն է գալիս, որին և մենք սրանից շատ առաջ հասած էինք։ Նա իսկապէս առաջարկում է որ քաղաքը ինքն ջրանցք շինէ, միայն այն զանազանութեամբ որ մենք առաջարկած էինք մի օրինաւոր և կանոնաւոր քաղաքային փոխառութիւն անել, իսկ մասնաժողովը կամենում է գտնել մի մասնաւոր անձն, որ լինի տեխնիկ-մասնագէտ, մի և նոյն ժամանակ ջրանցքի շինութիւնը յանձն առնէ և քաղաքին էլ իրանից մի գումար փոխ տայ, որի տոկոսները քաղաքը հետզհետէ կը վճարէ....

Այսպիսով մասնաժողովը կամենում է որ մի մասնաւոր անձն լինի մի և նոյն ժամանակ՝ և բանկ քաղաքի համար և նրա ջրանցքի շինութեան կապալառու....

Բայց այդ տեսակ անձն հաղիւ թէ կը գտնվի....

Այդ նշանաւոր խնդրի վրա մենք կրկին առիթ կունենանք խօսելու։

Գ. Ա.

ԼՕՉԻՆՕԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

—

Թիֆլիսից 18 վերստ հեռու գտնվում է մի երկրագործական ուսումնարան, Լօչինօի մէջ։ Այդ ուսումնարանի ինչ լինելը շատ քիչ յայտնի է ձեր ընթերցողներին։ Կաշխատեմ ուրեմն կարճ տեղեկութիւններ տալ նորա մասին, որքան կը ներէ լրագրական յօդվածի սահմանը։

Մայիս ամսին հարցաքննութիւններ կային այդ ուսումնարանի մէջ։ Մէկ օրվայ մէջ երկու դասատուն է հարցաքննվում։ այդ կատարվում է բոլորովին նոր մանկավարժական ձևով։ 7 ժամվայ ընթացքում 37 աշակերտներ 26 առարկաներից են հարցաքննվում։ Մի փոքրիկ սենեակի մէջ դիզված են ուսուցիչները և աշակերտները. ամեն մի ուսուցչի մօտ երկու աշակերտ են կանգնած և երկուսն էլ պատասխանում են հարցերին։ Այդ ժամանակ, ամենքի միասին խօսելուց այնպիսի աղմուկ և շփոթ է լինում,—որ ոչ աշակերտն է լսում ինչ որ ուսուցիչը հարցնում է, ոչ էլ ուսուցիչը կարող է լսել աշակերտի պատասխանը։ Եւ ահա այդ նոր ձևի բաբէլօնեան խառնակութեան մէջ վերջանում է հարցաքննութիւնը... Բոլոր աշակերտներից ցոյց տուած առաջադիմութիւնները բոլորովին միմեանց հաւասար են յայտնվում՝ օրինակ այն աշակերտը որ 2 թւանշանը չէ կարողանում 2-ի վրա բազմապատկել, նոյնքան առաջադէմ է ճանաչվում ուսուցչական խորհրդից, որքան այն աշակերտը որ ամբողջ ուսումնական տարվայ ընթացքում յայտնի էր որպէս ամենաաշխատասէր և ամենահասկացող աշակերտ.... Պէտք է խոստովանեմ, թէ ես իմ կեանքումս ոչ թէ միայն այդ տեսակ հարցաքննութիւն տեսած չեմ, բայց և սորա նման հարցաքննութիւն երբէք երևակայել չէի կարող։

մար, նպաստել քաղաքային փողերով Թիֆլիսում հայոց Թատրոն շինելու կամ գոնէ այդ միջոցներով հայոց ներկայացումները պահպանելու... Բայց այժմ էլ չէ կարելի այդ տեսակ բան առաջարկել, որովհետև հայոց Թատրոնը այն օրից կրթ միացել է վրաց Թատրոնի հետ՝ չորացել է, կորցրել է իր միակ գովելի յատկութիւնը՝ քաղաքիս մէջ և նրա շրջականներում անձրև յարուցանելու...

* * *

Մայիսի վերջն է, իսկ չոքը Թիֆլիսում յուլիսի չոքի նման է։ Լաւ հասարակութիւնը չատապում է հեռանալ քաղաքից՝ մի քանիներ գնում են ամառանոց, միւսները արտասահման։ Ամեն մարդ ով կարող է, իր վրա է մտածում,—բայց կան մարդիկ, որք չեն էլ կարող իրանց վրա մտածել։

Մինչև որ Թիֆլիսի լաւ հասարակութեան հայերը և հայուհիք հոգում են իրանց անձի մասին,—ինչ են անում նրանց խեղճ հայրենակիցները Փոքր-Ասիայում... Թշուառ, քաղցած, հարստահարված, ստրուկ... Երկու միլիոն հայոց ժողովուրդ այնքան ըմբացրած, ճնշված, ստրկացած է, որ ընդունակութիւն էլ չունի բողոքելու։

Վեր առէք մի ռուս լրագրի առաջին պատահած համարը,—և կը տեսնէք որ նրա էջերը լցված են զանազան նուիրատուութիւններով յօդուտ իրանց չքաւոր, հիւանդ և վիրաւորված ցեղակիցների, սլավօնացիների,—իսկ մեր հայոց հասարակութիւնը ինչ է անում իր խեղճ, ողորմելի, ատը-

Այժմ պատենք փոքր ինչ ուսումնարանում և նորա չորս կողմը....

Լօչինօ գեղը բոլորովին ցամաքել է, և Ջրանցքը (անունով Ջրանցք), որի շինելու նպատակն էր սեփական ջուր ունենալ ուսումնարանում, օրից օր չորանալու վրա է։ Բօստանի բոյսերը նոյնպէս շուտով բոլորովին կը չորանան։

Այդ ուսումնարանը այնպիսի տեղ է դրտնվում, որտեղ շարունակ տիրում է տենդ։ Միջին թուով օրը երեք կամ չորս աշակերտ անպատճառ հիւանդանում են տենդով։ Եօթ ուսուցիչներից տարվայ ընթացքում երկուսը հերթով միշտ հիւանդ են տենդով... Ինչքան խինա է գնում այդ ուսումնարանի վրա, կարելի է տեղեկանալ դեղավաճառ պ. Ցուրինովից և թէ Լօչինօի ուսումնարանի աշակերտները անդադար հիւանդ են տենդով, կարելի է հաւաստիանալ քաղաքային հիւանդանոցում։ Ուսումնարանի վարչութիւնը թէև տարեկան 300 ռուբլ վճարում է բժշկին, բայց բժիշկը տարվայ ընթացքում երկու, երեք անգամ տեսանելի է լինում ուսումնարանում, այնպէս որ հիւանդները ստիպված են մեծ մասամբ 18 վերստ ոտով գնալ բժշկին գտնելու համար։

Դարձեալ մի քանի տեղեկութիւններ դըպրոցի ուսումնական մասի վրա։ Եթէ աշակերտներին հարց ու փորձ անէք, կը համոզվէք որ դրանց մեծ մասը կամ արքունի ծառայութեան ամենաստոր պաշտօններից դուրս եկած, կամ զանազան ուսումնարաններից աքսորված երիտասարդներ են, ուրեմն չաջողված էակներ են, որք մտնում են այդ երկրագործական դպրոցը նորա համար, որ մի գործնական, դրական բան սովորեն; ժամանակով սովորածը կեանքում գործ դնել կարողանալու և մի կտոր հաց աշխատանքով ճարելու համար։ Բայց ինչ գործնական ուսում կարող է տալ երիտասարդներին այդ ուսումնարանը։ Իր վեց տարվայ գոյութեան ընթացքում ուսումնարանը մինչև այսօր չունի կանոնադրութիւններ, պրոգրամներ և այլն... աշակերտը երբ կամենայ, այն ժամանակ կաւարտէ ուսումը....

Կան մի քանի աշակերտներ, որոնք ուսումնարանում ընդունված են որպէս որդեգիրներ, կամ ձրիավարժներ՝ ուսումնարանը դրանց կերակրում է և հագցնում է։ Այդպիսիները երբէք չեն կամենում դուրս գալ դպրոցից, կամ աւարտել իրանց ուսումը, որովհետև գիտեն թէ իրանց ստացած ուսումով հազիւ թէ մի կտոր հաց կարող են ճարել իրանց համար։

Առհասարակ Լօչինօի երկրագործական ուսումնարանում աւարտածները չեն կարողանում երկրագործներ լինել՝ դրանց մեծ մասը ուսումն աւարտելուց յետոյ, կամ մասնաւոր ծառայութեան մէջն են մտնում, դառնում են մասնաւոր ծառաներ թէ քաղաքներում, թէ գիւղերում, կամ շատ շատ մի 7 կամ 8 ռուբլով ամիսը գրագրութիւն են անում։

Ահա մեր երկրագործական ուսումնարանի վեց տարվայ գոյութեան պտուղները։

* * *

ՆԱՄԱԿ ԴԶԼԱՐԻՑ

—

13 մայիսի

Սարսափելի տեսարան է ներկայացնում այժմ բոլոր Դզլարը, իւր շրջակայքով։ Մի գիշերվայ ընութեան անխիղճ հարուածը խլեց ապահովականը հազարաւոր արդիւնաբերողների, և նոցա հետ ի միասին բիւրաւոր մշակ հասարակութեան, որոց աշխատանաց միակ աղբիւրն էին այն արդիւնաբեր այգիքն, որք այսօր ներկայանում են նայողի աչքին, իբրև ամայի դաշտեր, զրկուած որ և իցէ բուսականութիւնից։

Մայիսի 9-ին հիւսիս-արևմտեան ահեղ հողմից յետո, օդը սկսաւ ցրտել, մինչ այն, որ գիշերը հասաւ—6° ցրտի ըստ Ռեոմիւրի, որով և ոչնչացաւ խսպառ Դզլարի և նորա շրջակայքի երկու հազար այգիների բոլոր բերքը,—այդ միակ յոյսը և ապաւէնը մի բազմամարդ արդիւնաբեր հասարակութեան, որին առած վնասը հանում է երկու միլիոն ռուբլ արծաթի։ Այդ վնասը տարածվում է անմիջապէս և այն բիւրաւոր մշակ հասարակութեան վրա, որ ամբողջ տարին բանում էր Դզլարի այգիներում, որանով ապահովացնում իւր ընտանիքը։ Այսօր մշակն էլ զրկուած է իւրեան ապահովացնող աղբիւրից, և յուսահատ դրութեան մէջ է. գալու ձմեռվայ համար այգետէրերը չունենալով դրամ, չը գիտեն թէ ինչով պէտք է միանկն իւրեանց այգիները յընթացս մի տարի և կէսի մինչև միւս տարվայ բերքի ստանալը, իսկ չը մշակուած մնալով այգիները կարող են իսպառ ոչընչանալ։ Աւելացրէք սորա վրա հարկաւորութիւնը ընտանիք պահելու համար—և ահա ձեզ յուսահատ վիճակը իւր սարսափելի հետևանքով։

Այսպիսի դէպքերում անչուշտ պէտք է յառաջ գայ բարեխնամ իշխանութիւնը իւր օգնող միջոցներով, որպէս զի պահպանէ ամբողջ գաւառը սնանկանալուց, տայ հնար այգետէրերին պահպանել իւրեանց այգիները, այդ միակ հարստութիւնը ամբողջ ժողովրդեան, ըստ որում ժողովրդի բարեկարգ վիճակից է կախված բարօրութիւնը նոյն իսկ տերութեան։

Այդետէր

—

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա) քաղաքում հրատարակվող «Донская Пчела» լրագրի № 27-ի մէջ կարդում ենք գծի տակ Գաբրիել արքեպիսկոպոս Այվազովսկու կարճ կենսագրութիւնը։ Այդ յօդվածի մէջ պատմված է Գաբրիել արքեպիսկոպոսի բոլոր գործունէութիւնը, թէ Վենեցիայում, թէ Փարիզում, թէ վերջապէս Թէոդոսիայում և Նոր-Նախիջևանում, մի գործունէութիւն, որ եղել է շատ բազմակողմանի՝ մանկավարժական, դրականական և կառավարչական։ Գաբրիել արքեպիսկոպոսը ծնվեց 1812 թ-ին, թէոդոսիայում։

—

Ասում են որ Թիֆլիսի Ալէքսանդրեան այգիում քաղաքային թատրոն չինելը մեծ արգելքներ կը ներկայացնէ, որովհետև այդ այգու վերի մասը չէ ներկայացնում հատատ հող չինութեան հիմքը դցելու համար։ Ասում են որ առաջ այդտեղ մի խրամ է եղել 10 սաժէն խորութեամբ, այնպէս որ կարելի է միայն չինութեան հիմքը դցելու վրա այնքան ծախս կերթայ, որքան կը հարկաւորվէր ամբողջ չինութիւնը կառուցանելու համար։

—

Մեզ յայտնի է, որ Թիֆլիսում հիմնվող արվեստաւորների ժողովը հաստատվեցաւ Կովկասեան բարձր կառավարութիւնից։ Մայիսի 30-ին կը լինի այդ ընկերութեան առաջին ժողովը։ Տես յայտարարութիւններ։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Մ. Միանսարեանցից, Ս. Պետերբուրգից, նրա հրատարակվող «Bibliographia Caucasica et Transcaucasica» աշխատութեան 1 հատորը (1 և 2 բաժանմունքները)։ Դա մի ցուցակ է այն բոլոր աշխատանքների այլ և այլ լեզուներով, որք Կովկասին են վերաբերվում, թէ բնագիտական, թէ պատմական, թէ ազգագրական բովանդակութեան։ Դա ծանր, մեծ և ճշմարիտ օգտաւէտ աշխատանք է։ Միայն ցաւալի է որ այբուբենական ցանկ չը կայ գրքի մէջ, որ շատ կը հեշտացնէր պարապմունքները։ Գրքի հետ ուրիշ մօտիկ ծանօթանալուց յետոյ, դարձեալ կը խօսենք այդ օգտաւէտ աշխատութեան մասին։ Գիրքը ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ։

—

Ստացանք ԲԱԳՈՒԻ Մարդասիրական Ընկերութեան հաշիւը 1875 թ-ի։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են՝ «Դուք գիտէք արդէն որ մեզանում այս տարի մի ամսվայ չափ, մինչև մարտի վերջին օրերը սաստիկ չորութիւն արաւ։ Ներկայ մայիս ամսին մինչև ամսիս 5-ը անձրև էր գալիս, իսկ այդ օրից յետոյ կըրկին տիրեց երաշտութիւնը։ Մեր հասարակութիւնը իր հոգևորականների հետ միասին դուրս եկաւ թափօրով, Աստուծուց խնդրելու որ մեզ անձրև տայ։ Բայց ինչպէս կարող է Աստուած լսել ժողովրդի և մանաւանդ նրա հովիւների մեղաւոր աղօթքները.... Թափօրի մէջ մասնակցող քաղաքիս երկու հայ քահանաները միմեանց մէջ խառով են և դեռ երկու երեք օր սրանից առաջ միմեանց մէջ սաստիկ կռիւ են ունեցել... Դրանցից մինը կոնսիստորիայի անդամ է, միւսը ոչ։ Եթէ այդ տեսակ հովիւների մեղաւոր բերանով ժողովուրդը Աստուծուց անձրև է խնդրում, հասկանալի որ Աստուածը չի լսի նրանց աղօթքը։»

—

Մի քանի օր սրանից առաջ եթէ Թիֆլիսից գնայիք մինչև Լօչինօի երկրագործական ուսումնարանի սահմանը, կը տեսնէիք որ ճանապարհի աջ և ձախ կողմերը մի տեսակ փոքրիկ սև գոյնի ճիճուներով պատած է։ Այդ մորեխի ճիճուներն են որ ռուսերէն нѣшая саранча են անուանվում։ Մի քանի օրվայ ընթացքում այդ ճիճուները ընդունեցին մորեխի կերպարանք և սպառնում են խեղճ գիւղացիների արտերին։ Բայց վրա հասաւ անձրևը և մօտաւորապէս մորեխի ճիճուների $^2/_3$ մասը ջարդեց, իսկ մնացած $^1/_3$ մասը արդէն մորեխ դառնալով, սկսել էր ուտել նոր դուրս եկած դարի և ցորեան։ Այժմ Լօչինօի մօտ մի քանի արտեր բոլորովին այլ կերպարանք են ստացել՝ նորա այլ ևս կանաչ գոյն չունեն և միջին թուով իւրաքանչիւր ցորեանի կամ դարու վրա նստած են և անխնայ կրծում են 15 մորեխներ... Այդ դժբաղդութեանն առաջն առնելու համար ոչ ոք չէ հոգում, ոչ արտերի տէրերը, ոչ էլ գիւղական կառավարութիւնը։ Եթէ անձրևը և ցուրտն անգամ մասամբ ոչնչացնեն մորեխը և այդ վնասակար կենդանիները թէև սակեկով, կը պարարտացնեն հողը, բայց ուրիշ կողմից մարմինները գետնի երեսին փտելով, կապականեն օդը, որ կարող է տարածել զանազան տարափոխիկ հիւանդութիւններ։

—

Այժմ գրեթէ ամեն օր Թիֆլիսում կան համառային կօնցերտներ։ Մայիսի 26-ին, չորեքշաբթի օրը կօնցերտ կը լինի թատրոնի այգիում յօգուտ օրկէստրի կառավարչի պ. Տրուֆիի։ Մայիսի 31-ին պ. Բագատելլո մի կօնցերտ կը տայ Սան-Սուսի այգիում, իսկ յունիսի 1-ին դարձեալ թատրոնի այգիում կօնցերտ կը լինի յօգուտ պ. Դանդուրեանցի։ Պարոնը իտալական օպերայի օրկէստրի երաժիշտներից մէկն է։

—

Թիֆլիսում գտնվող Կովկասեան Երաժշտական ընկերութիւնը վերջացրեց իր հինգ տարվայ գոյութիւնը և փակվեցաւ։ Այժմ մենք լսում ենք, որ պ. պ. Սավանելի և Միզանդարի, որոնք արդէն քանի մի ժամանակ է հիմնել են և աջողութեամբ կառավարում են մի մասնաւոր երաժշտական ուսումնարան, կամենում են վարձել հին Ներսիսեան դպրոցի շինութիւնը իրանց ուսումնարանը այդտեղ տեղափոխելու համար։ Ցանկանում ենք պարոններին կատարեալ աջողութիւն այդ տեսակ օգտաւէտ գործի մէջ և յոյս ունենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը օգուտ կը քաղէ այդ դեպքից և չի մերժի իր շինութիւնը վարձով տալու այդ օգտաւէտ և օրինաւոր ձեռնարկութեան։ Մենք մեր կողմից կարծում ենք որ հոգաբարձութիւնը կարող էր այդ դէպքից օգուտ քաղել, Միզանդարի և Սավանելի պարոններին տունը վարձով տալով, կապել նոյնպէս այդ պարոնների հետ և հետևեալ պայմանը՝ որ նրանք յանձն առնեն մեր Ներսիսեան դպրոցի աշակերտներին նոտերով երգեցողութեան տեսութիւնը (թէօրիա) սովորեցնել։ Այժմ երբ Վեհափառի ցանկութեամբ ուշադրութիւն է դարձած մեր ուսումնարաններում կանոնաւոր երգեցողութեան ուսման վրա, անհրաժեշտ կը լինէր մեր ազգային հոգևոր դպրոցի աշակերտներին ծանօթանալ հիմնաւորապէս կանոնաւոր երգեցողութեան արհեստի տեսութեան հետ։

—

Ամառը սկսվեցաւ պէս Թիֆլիսի ամառային թատրոնի այգիում սկսվեցան կօնցերտներ որոնք լինում են չաբթին երեք, չորս անգամ և որոնց մասնակցում են իրանց երգերով տիկին Դէկէր-Շէնկ և օրիորդ Այմէ։ Այդին միշտ գաղով լուսաւորված է լինում և դուք կը պատահէք այդտեղ մեր Թիֆլիսեան ամենաընտիր հասարակութիւնը, որ մի քանի օրից յետոյ, յունիսի սկզբներում, կը ցրվի՝ ոմանք արտասահման, ոմանք զանազան ամառանոցներ հեռանալով։

—

Լսում ենք որ մայիսի սկզբներում Կովկասեան Փոխարքայի Գլխաւոր Վարչութեան Կառավարիչ, պ. սենատոր Կլուչին այցելից մեր երկրագործական ուսումնարանը Լօզինօի մէջ։ Այդ այն ժամանակն էր, երբ եղանակը յանկարծ անձրևային և ցուրտ էր դարձել։ Չը նայելով վատ եղանակին, նորին գերազանցութիւնը ոտով գնաց ուսումնարանից $^3/_4$ վերստ հեռաւորութեամբ գտնվող Ջրանցքը տեսնելու։ Այնտեղից վերադառնալով, մտաւ ուսումնարանի սենեակները և նկատելով թէ դասատուները ցուրտ և խոնաւ էին, հրամայեց վառել բոլոր սենեակները։

—

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են մեր լրագրին՝ «Ժողովրդից ընտրած պատգամաւորները յաջորդ վարդապետի հրաւէրքով անցեալ փետրվար ամսի 6-ին ժողովվելով տեղիս յաջորդարանի մէջ, ընտրեցին քաղաքիս հայ եկեղեցիների երեցփոխանաց հաշուառիչներ՝ քահանայ Գ. Բաբաջանեանին, պ. պ. Ա. Համասփիւրեանցին, Ս. Ասիանոսեանին և Ղ. Յովհաննիսեանցին։ Պատգամաւորները իրանց ընտրութեան թերթը թողնում են յաջորդի մօտ, որ սա հոգևոր կառավարութեան միջնորդութեամբ հաստատել տայ ընտրվածներին իրանց պաշտօնում։ Բայց մինչև այսօր ոչինչ կարգադրութիւն չը կայ նոցա հաստատման մասին։ Եթէ հաւատանք չար լեզուներին, այդ ընտրութեան հաստատութիւնը երաշ է մնալու, որովհետև կատարվելով դա ընդդէմ կը լինի մի քանի երեցփոխանների օգուտներին...»

—

Մեր Փարիզի մշտական թղթակից պ. Ցարոյ այս օրերս հասաւ Թիֆլիս և կը շարունակէ այստեղ էլ աշխատակցել «Մշակին»։

—

Մենք լսում ենք որ Թիֆլիսի իտալական օպերայի եկող ձմեռվայ սեզօնին հրաւիրված են հետևեալ երգիչները՝ տիկիններ Սկարատի-Բրէչիանի, Պաօլէտտի և Լուէ (երեքն էլ սոպրանօ), պ. պ. Վիլլա և Դէլիլիէրս

բուկ Փոքր-Ասիայի հայրենակիցներին օգնութիւն հասցնելու համար,—ոչինչ։

Իսկ հայի դրութիւնը Փոքր-Ասիայում աւելի անմխիթար է քան թէ Թիւրքիահպատակ այլ քրիստոնեայ ազգերի, հերետիկոսների, բօսնիակների։ Հայը ամենքից շատ ճնչված, հարստահարված է, նա հասցրած է մինչև կրաւորականութեան վերջին աստիճանը։ Նորան մինչև անգամ աւելորդ է և անտեղի է աշխատանք քարոզելու։ Երբ որ մի եւրօպացի ճանապարհորդ հարցնում է Փոքր-Ասիայի հայ գիւղացուց թէ ինչի նա իր գերտինը չէ բարվոքում, գիւղացին պատասխանում է նրան՝ «ինչ հարկաւոր է»—ինչպէս թէ ինչ հարկաւոր է, հարցնում է եւրօպացին, հողը աւելի արդիւնք կը տայ։—«Ինձ ինչ օգուտ որ աւելի արդիւնք կը տայ, ասում է խեղճ հայ գիւղացին, ստացած արդիւնքներից խօ ես օգուտ քաղելու չեմ, բոլորը ինչ որ կը ստանամ, պէտք է տամ հարկ հաւաքողին... ինչ օգուտ է, ինչի պէտք է հարկ հաւաքողի համար աշխատեմ, դառն քրտինք թափեմ...»

* * *

Այս ֆելիէտոնից ընթերցողը կատարեալ իրաւունք ունի դժգոհ լինել, որովհետև նա ոչ հետաքրքիր է, ոչ ծիծաղաշարժ է, այլ մի կողմից շատ կարճ, միւս կողմից շատ տխուր...

Գրվածքը միշտ արտայայտութիւն է գրողի հոգու տրամադրութեան։ Գրվածքս այսօր տխուր է, որովհետև ես ինքս էլ շատ տխուր տրամադրութեան մէջն եմ գտնվում։

* * *

Բայց թողնենք այդ մտածմունքները, թողնենք հոգու սգալի տրամադրութիւնը,—վերջին հետաքրքիրը Կ. Պոլսից ստացած, մեզ անչափ ուրախացրեց։ Թիւրքիան սահմանադրութիւն կունենայ, ուրեմն Թիւրքիահպատակ հայերի դրութիւնը շատ կը լաւանայ...

Կարող եմ ինձ երևակայել թէ ինչ կը լինի Թիւրքիայի սահմանադրութիւնը, ինչ կը լինի նորա ազգային-ժողովը...

Ի հարկէ, ինչպէս ամեն սահմանադրական երկրում, Թիւրքիայումն էլ ամբողջ ժողովրդից, պետութեան ամեն ազգութիւններից պատգամաւորներ կընտրվեն ազգային-ժողովի մէջ անդամ և ժողովրդի ներկայացուցիչ լինելու համար՝ Փարիզում ուսում ստացած, droit, իրաւաբանութիւն (կամ աւելի լաւ է ասել՝ անիրաւութիւն) սովորած տաճիկ և հայ հոսոս, բիթամիտ երիտասարդներից մինչև Թիւրքիահպատակ այն թափառական վայրենի ցեղերը, որոնք սատկած ուղտի մսով են կերակրվում (ինչպէս նորերումս էլ պատահել է հին Բաբելոնի աւերակների շրջակայքում գետեղված վայրենի ցեղերի հետ), և այդ կերակուրից ու հիւանդանում են ժանտախտով և յետոյ տարածում են ժանտախտը ամբողջ երկրում...

Երևակայեցէք ձեզ այդ տեսակ քաղաքացիներ, որք սատկած ուղտի միսը ուտելուց յետոյ, պէտք է քուէարկէն և ուղարկեն Կ. Պոլսի ազգային ժողովը իրանց պատգամաւորներին...

Ես ինձ երևակայում եմ հետևեալ պատկերը՝ Կ. Պոլսի ազգային, սահմանադրական ժողովի բացման օրը հասաւ... բոլոր պատգամաւորները հաւաքված են... «Ջանըմ, ուր կը նստես, դուշում է մի փարիզակիրթ հոսոս հայ երիտասարդ իր բարեկամին, ուր կը նստես, ձախ կողմը չէս ուզեր նըստել... մօսիո Կամպեդդա և մօսիո Ռաբբայլ միշտ ձախ կողմը կը նստեն, չը գիտես...»—Այո՛, այդ, ձախ կողմ նստենք, վասն զի opposition մը պիտի ընենք... (գնում են և սխալմամբ աջ կողմն են նստում)։ «Չը գիտես ինչի վրա պիտի զրուցեն... ես պիտի աղէկ բան մը առաջարկեմ ժողովին, որ պիտի մեծ réforme մը ըլլայ ազգի համար, այն է civil ամուսնութիւնը և կանանց աշխատանքի ազատութիւնը... Այդ ժամանակ նախագահը, մի թուրք կաշառակեր փաշա, մտնում է դահլիճը։ Ամենքը լուռ են կենում։ Նախագահը մի ճառ է կարդում, ասելով թէ Թիւրքայ ազգային ժողովը պիտի նման լինի ամեն եւրօպական պարլամենտներին, եթէ ոչ Եւրօպան չի հաւատայ որ Թիւրքիան սահմանադրութիւն ունի։ Այդ պատճառով մի քանիներին հրամայում է որ աջ կողմը նստեն և ինչ որ առաջարկի տերութիւնը, թէև ամենամեծ յիմարութիւն լինի, անպատճառ պաշտպանեն, միւսները ձախ կողմը նստեն և տերութեան ամեն առաջարկութիւնը հերքեն... մէջ տեղն էլ նստեն այնպիսի անձինք որք լուռ պիտի մնան, ոչ մէկի, ոչ միւսի կողմը բռնեն,—և որ Եւրօպայում կենտրօն է անուանվում.... Նիստը սկըսվում է։ Ցանկարծ աղաղակ է լսվում կենտրօնում։ Բաբելօնի աւերակների շրջակայքում բնակվող թափառական ցեղերի պատգամաւորը ուշաթափ ընկնում է իր նստարանից... մի քանի օր առաջ սատկած ուղտի կերած միսը ազդել է՝ նա ժանտախտով հիւանդ է... նոյն ըստեղում ժանտախտը տարածվում է և պարլամենտի միւս պատգամաւորների մէջ... սկսվում է աղաղակ, աղմուկ, անկարգութիւն... Նախագահը այդ ժամանակ յիշում է թէ երբ եւրօպական պարլամենտներում անկարգութիւն, աղմուկ է լինում,—նախագահը ծածկում է իր դէմքը... բայց որովհետև փաշան այնպէս էլ գլխին ֆէս ունի ծածկած, գլխին զրակ դնելու տեղ ոտների վրա մաշիկներ է հագնում, որ հանած ունէր նստի ժամանակ...

Նախագահը դուրս է գալիս դահլիճից և նիստը վերջանում է։

Եթէ Թիւրքիայի սահմանադրութեան և նորա ազգային-ժողովի իմ նկարած պատկերը հնարած էլ է,—այնու ամենայնիւ երևի շատ մօտ կը լինի իրականութեանը...

Ասիացի

(տէնօրներ), պ. Սպարապանի (բարիտոն), պ. պ. Սակկարդի և Բէնֆերերի (առաջին և երկրորդ բաս)։ Իսկ օրկէստրի կառավարիչ կը լինի, ինչպէս ասացինք, պ. Անտոնիէտի։ Նոյնպէս յիշեցինք որ բաս-բուֆո կը լինի պ. Բոնաֆօս։

—

«Тифлисск. Вѣстн.» լրագիրը ստացել է մայիսի 20-ից մի հեռագիր Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, թէ մայրաքաղաքի ռուս «Русскій Міръ» լրագիրը կառավարութենից երկրորդ նախազգուշութիւն ստացաւ Բագուզայի թղթակցութեան համար, որտեղ գրողը բողոքում է Բերլինի ժողովի վճիռների դէմ։

—

Մայիսի 24-ին, երկուշաբթի օրը, ԹԻՖԼԻՍԻ դումայի նստի մէջ կարդացվեցաւ ուպրավայի զեկուցումն Թիֆլիսեան նահանգապետի առաջարկութեան մասին, Բարձրագոյն հրամանով քաղաքիս տնտչէն բաժնի նահանգական վարչութենից քաղաքային վարչութեան ձեռքը անցնելու մասին։ Դուման այդ զեկուցումը լսելուց յետոյ, վճռեց հետևեալ նստում ընտրել քուէարկութեամբ մի մասնագէտ անձն, որ կը լինի ուպրայայի անդամ և մի և նոյն ժամանակ տնտչէն բաժնի աշխատանքների կառավարիչ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԻԱ

Վերջին հեռագիրները Կ. Պոլսից հաղորդում են հետևեալը՝ Թիւրքիայի սուլթան, Աբդուլ-Ազիզ, գահից ընկաւ և նրա տեղ Թիւրքիայի գահը նստեց նրա եղբօր-որդին Մահմետ-Մուրադ-էֆէնդի։ Թիւրքաց օրէնքների զօրութեամբ դա գահի օրինական ժառանգ է և ոչ Սուլթանի որդին։ Նոր սուլթանը ընդունեց սօֆթաներից առաջարկված քաղաքական պրոգրամը, որ պահանջում է մտցնել Թիւրքիայում սահմանադրութիւն, հիմնել բարձրագոյն ազգային ժողով (միլլէ-մեջլիսի), ոչնչացնել սերալը, պակասեցնել պալատական ծախսերը, ենթարկել այդ ծախսերը ազգային ժողովի հսկողութեան, հաստատ միջոցների ձեռք տալ ապստամբված գաւառների խռովութիւնները ճնշելու համար, ընդունել մի աւելի հաստատ և որոշ դիրք Սերբիայի քաղաքականութեան վերաբերութեամբ, պատժել Սալոնիկի սպանողներին և նոցա, որք յարուցին այդ անկարգութիւնները, պատժել կաշառակեր պաշտօնեաներին։ Ասում են որ քաղաքական և ֆինանսական շրջաններում Եւրօպայի մէջ այդ յեղափոխութիւնը աջող տպաւորութիւն գործեց։ Կարծում են որ այժմ կը հեշտանայ արևելեան հարցի վճռելը։ Եւրօպական ամեն բօսաներում Թիւրքաց փոխառութեան կուրսերը բարձրացան։ Նոր կազմակերպվող մինիստրութեանը կը մասնակցեն՝ Միտհադ-փաշա, մեծ վեզիրի պաշտօնով, Խալիլ-փաշա, որպէս արտաքին գործերի մինիստր, և Սադիկ-փաշա, ֆինանսների մինիստր։ Ընկած սուլթան Աբդուլ-Ազիզը բանտարկված է պահվում սերալի մէջ։ Հաւատացնում են որ նոր սուլթանը շուտով պիտի ճանաչված լինի եւրօպական պետութիւններից։ Դիպլոմատական յարաբերութիւնները առ ժամանակ ընդմիջված են, որովհետև եւրօպական պետութիւնները յոյս ունեն թէ նոր նշանակված սուլթանը յանձն կառնէ առանց որ և է դրսի ստիպողական միջոցի, իրագործել Թիւրքիայի մէջ եւրօպական տէրութիւններից բոլոր առաջարկված անհրաժեշտ վերանորոգութիւնները։ — Սերբիայի, Չերնոգորիայի, Ցունաստանի և Ռումանիայի մէջ կապված է յարձակողական և պաշտպանողական դաշնադրութիւն Թիւրքիայի դէմ։—Մայիսի 20-ից (յունիսի 1-ից) հեռագիրը հաղորդում է Կ. Պոլսից հետևեալը՝ նոր սուլթանը հրատարակեց մի հրաման, որի մէջ ասված է թէ առժամանակ այժմեան մինիստրութիւնը մնում է անփոփոխ։ Պալատական ծախսերը պակասեցրած կը լինեն, թէև աննշան մի դումարով։ Հրամանը պատիրում է մինիստրութեանը կարգի գցել պետութեան ֆինանսները, բարեկարգել երկրի դատաստանները մասը և զարգացնել ժողովրդական կրթութիւնը։ Մինիստրութեանը յանձնվում է նոյնպէս ներկայացնել իր կարծիքը թէ պետական որ ձև ամենայարմար կը լիներ Թիւրքիայի համար, պետական որ ձև կարող էր համապատասխանել պետութեան հպատակ բոլոր ազգութիւնների պահանջներին, առանց տարբերութիւն դնելու ազգութիւնների և կրօնքների մէջ, ամենքին հաւասարապէս ազատութիւն շնորհելով։ Սուլթանի հրամանը վերջանում է յայտնելով ամեն եւրօպական պետութիւնների հետ խաղաղ յարաբերութիւններ պահպանելու ցանկութիւնը։—Մայիսի 21-ից հաղորդում են Կ. Պոլսից, որ ընկած սուլթանը մի ինքնագիր նամակի միջոցով կամաւոր կերպով հրաժարվում է գահից և ճանաչում է Մուրադին Թիւրքիայի սուլթան։—Հեռագիրը հաղորդում է որպէս լուր, որ իբրև թէ Ռուսաստանը չէ կամենում Մուրադին սուլթան ճանաչել։—Բելգրադից պաշտօնապէս տեղեկացնում են որ Սերբիայի և Ռումանիայի մէջ կապված դաշնադրութեան լուրը ստոյգ չէ։—Ֆրանսիական „Univers“ լրագիրը հաղորդում է որ Սիրիայում բազմաթիւ քրիստոնեաներ սպանվեցան Թիւրքաց զինուորականների ձեռքով։—„Тифлис. Вѣстн.“ լրագրի հեռագիրը մայիսի 23-ից հաղորդում է, որ նախկին սուլթան Աբդուլ-Ազիզ վերջացրեց իր կեանքը անձնասպանութեամբ բաց անելով իրան մարմնի եռակները։

ՍՊԱՆԻԱ

Մադրիդի մէջ քանի մի ամիս է յարուցված է սպանիական մի քանի գաւառներում միջին դարերից մնացած համայնքի գաւառական իրաւունքները ոչնչացնելու խնդիրը։ Այդ համայնքները, ֆուէրօսները, մանաւանդ մեծ ոյժ ունեն մինչև այժմ Բասկեան լեռնային երկրում։ Մինիստրների խորհրդի նախագահ պ. Կանովաս-դէլ-Կաստիլիօ, ինչպէս հաղորդում է Ֆրանսիական „Journal des Debats“ լրագիրը, յայտնել թէ այս բոպէիս, երբ ժողովուրդը դեռ հանգստացած չէ նոր վերջացած ներքին պատերազմից, դժուար կը լինի ոչնչացնել գաւառների կառավարական անկախ իրաւունքները։—Մայիսի 15-ից հեռագրով հաղորդում են Ֆրանսիական „Estafette“ լրագրին որ սպանիական Տօլօսա քաղաքի բնակիչները ապրստամբվեցան կանչելով „կեցցէ հանրապետութիւն, կեցցեն ֆուէրօսներ։“

ԻՏԱԼԻԱ

Իտալական պատգամաւորների ժողովի մայիսի 23-ի նստի մէջ, պ. Մանչինի առաջարկել է նոր օրէնքների մի ծրագիր հոգևորականների զեղծումների վերաբերութեամբ որ նոքա կատարում են իրանց պաշտօնավարութեան ժամանակ։—Կղերական „Unita Catolica“ լրագիրը հաղորդում է, որ Օրիստանո քաղաքում եղած իտալական եպիսկոպոսների ժողովում վճռված է որ եկեղեցական պակասատարութիւնը պէտք է միշտ քաղաքականից առաջ լինի։—Արտաքին գործերի մինիստր, պ. Մելագէրի յայտնել է որ Անգլիայի հրաժարվելը Բերլինի կայսերաժողովի վճիռները ճանաչելուց, չէ կարող ներգործել եւրօպական այլ պետութիւնների համաձայնութիւնների և գործունէութեան եղանակի վրա արևելեան հարցի վերաբերութեամբ։

ԱՆԳԼԻԱ

Անգլիական „Standart“ լրագրի խօսքերին նայելով Միջերկրական ծովի վրա գտնվող անգլիական նաւերի թիւը կը հասնի 20-ի, հինգ հազար զօրքով։ Լօնդօնից հաղորդում են հեռագրով „Русскій Міръ“ լրագրին, որ անգլիական „Sultan“ անունով պատերազմական նաւը մայիսի 15-ին (27) դուրս գալով Սպիտգէտ նաւահանգստից, ճանապարհը ընկաւ դէպի Միջերկրական ծովը։ Այդ նաւը կառավարում է Էդինբուրգեան հերցոգը։ Նոյն տեղից հաղորդում են որ մայիսի 15-ին գերմանական նաւատորմը հասաւ անգլիական Պլիմուտ նաւահանգիստը։—Գերմանական „Köln. Zeitg.“ լրագրի Լօնդոնի թղթակիցը հաղորդում է թէ անգլիական հասարակական կարծիքը շատ գրգռված է մի կողմից Բերլինի ժողովի վճիռներին մասնակցելու անգլիական տէրութեան կողմից հրաժարվելու պատճառով, իսկ միւս կողմից տեսնելով թէ ինչ պատերազմական պատրաստութիւններ են կատարվում թէ ցորքի, թէ նաւատորմի մէջ։—Մայիսի 23-ին Լօնդոնի համալսարանում անգլիական աշխարհագրական ընկերութեան տարեկան ժողով եղաւ։ Այդ ընկերութեան անդամների թիւը այժմ 3125 է։ Այդ ընկերութեան նախագահը նշանակված այժմ Ռուտերֆօրդ Ալկոն, որ Եապօնիայում և Չինաստանում երկար ժամանակ հիւպատոս էր։ Հանդիսաւոր ճաշի ժամանակ հաղորդվեցաւ ընկերութեանը, որ տէրութիւնը դիտաւորութիւն ունի խնդրել պարլամենտից 3000 ֆ. ստ. (21 հազար ռուբլ) դումարի լուծումն լայտրնանտ Կամերոնի Աֆրիկայում արած ուսումնական ճանապարհորդութեան ծախսը ծածկելու համար։

—

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

—

Մայիսի 15-ին

Լրագրաց մէջ կարդում ենք, թէ ամէրիկական «Ֆրանկլին» անուն պատերազմական շոգենաւը Կ. Պոլիս գալու համար ճանապարհ է ընկել։—Մասնաւոր նամակները հաղորդում են որ մայիսի 8-ին Էմիրնէ, Ֆիլիպէ և Պալքան սարերի վրա բաւական խոր ձիւն է եկել։ Նոյնպէս Նիկոմէդիայում։—Նորերումս սօֆթաները հաւաքվելով Կ. Պոլսի «Սուլթան Մահմուդ» անունով մզկիթի մէջ, և հրաւիրելով այնտեղ իրենց մեծերին, բոլորին էլ յատուկ յատուկ երդվել են տուել, թէ յեղափոխութեան միջոցին, քրիստոնեաներին դիպչելու չեն։ Միւս օրվայ ժողովի մէջ երկու սօֆթաներ դոցա մէջ երևալով սկսում աղաղակել թէ՝ անհաւատ քրիստոնեաներին պէտք է կոտորել։ Մնացած սօֆթաները դիմելով այդ երկուսին՝ հարցնում են՝ արդեօք նախընթաց օրը նրանք ներկայ չէին մզկիթի մէջ երդում տալու ժամանակ և արդեօք դրանք իր մզկիթին են պատկանում։ Երկու մօլեռանդ սօֆթաներ տալիս են իրանց մզկիթի անունը, բայց յայտնվում է որ իրանց անուանած մզկիթից ուսանողները ներկայ են և այսպէս այդ երկու անձինք ճանաչվում են որպէս կեղծ սօֆթաներ որոնց նպատակին էր երևի շըփոթ և անկարգութիւն գցել ամբոխի մէջ, մոռանդութիւնը յարուցանելով. յայտնվում է որ դրանք երկու բօլգարներ են։ Իսկոյն սօֆթաների ժողովը յանձնում է երկուսին էլ ոստիկանութեանը և այժմ նրանք վարչութեան քննութեան են ենթարկված։—Քաղաքիս օտար դեսպանութիւնների ներկայացուցիչները անգլիական դեսպանատան մէջ ժողովելով, որոշել են զգուշութեան համար զինուորել իրանց ծառաներին և նաւաստիներին, մահմետական աղքատնակութեան կողմից սպառնող յուզմունքներին առաջն առնելու և դեսպանատների մօտ պահապաններ ունենալու համար։ Այդտեղ հրատարակվող «Levant Herald» անգլիական լրագիրը Ռուսիայի դեսպան գեներալ Իգնատիէվի դէմ մի սաստիկ յօդված գրելով, որտեղ ասում էր թէ օտար տէրութիւնների ներկայացուցիչների կողմից պաշտօնապէս և ակներև կերպով յայտնած այդ կասկածը ժողովրդի վերաբերութեամբ աւելի էլ սարսափ է գցում Թիւրքաց կառավարութեան սիրտը,—լրագիրը անորոշ ժամանակով արգելվեցաւ Թիւրքաց տէրութեան հրամանով։—Եւրօպական տէրութիւնների պահանջները կատարվեցան՝ Սալոնիկի մէջ սպանված գերմանական և ֆրանսիական հիւպատոսների մարմինները փառաւոր յուղարկաւորութեան հանդիսով թաղվեցան։ Հանդիսի ժամանակ ամբոխի մէջ կարգն և հանգստութիւնը խանգարված չեն եղել։ Սպանողներն էլ իրանց արժանաւոր պատիժը կրեցին։ Օտար տէրութեանց կողմից ուղարկված են Սալոնիկ 20-ի չափ նաւեր և Բերլինի կայսերաժողովի որոշման համեմատ Գերմանական 5 նաւ է ուղարկած այնտեղ՝ այդ նաւերի մէջ 90 թնդանօթ և 2300 զօրք կայ։—Կ. Պոլսում այս բոպէիս զանազան տէրութեան կողմից ուղարկված 12 պատերազմական նաւեր կան, որոնց մէջ 40 թնդանօթ և 1170 զօրք կայ Կ. Պոլսի մահմետական հասարակութիւնը, տեսնելով այդ բազմաթիւ պատերազմական նաւերի գալը, սկսեց ամեն կողմից յայտարարել թէ մահմետական ամբոխը երբէք դիտաւորութիւն չէ ունեցել քրիստոնեաների վրա յարձակվելու, և թէ չարժումը բոլորովին ուրիշ նպատակ ունէր։ Սօֆթաներ կոչված կրօնական ուսանողները միանալով «Երիտասարդ Թիւրքիա» (Jeune Turquie) կոչված կուսակցութեան հետ, խնդիր տուած են Սուլթանին, որի մէջ պահանջում են հայերին տուած սահմանադրութեան օրինակով քաղաքական իրաւունքները և ազգային-երեսփոխանական ժողովի հաստատելը Կ. Պոլսի մէջ։ Մինչև այժմ որոշ կերպով չէ իմացված թէ այդ խնդիրը սուլթանի կողմից ինչ ընդունելութիւն է գտած։ Ասում են որ այդ խնդիրքի հեղինակը «Երիտասարդ Թիւրքիա» կուսակցութեան պարագլուխ Միդհադ-փաշան է։—Քաղաքիս մէջ այս մօտ օրերս մի քանի մանր հրդեհներ պատահեցան և այդ հրդեհների մինին պատճառը լուցկիի գործարանը լինելով, վարչութիւնը հրամայել է Կ. Պոլիս քաղաքի մէջ գտնված լուցկիի բոլոր գործարանները հեռացնել քաղաքիս շրջանից դուրս։—Բօլգարիայի ապստամբական շարժումը հետզհետէ ընդարձակվում է։ Այժմ ապստամբ բօլգարների թիւը, ասում են, 80 հազարի է հասել։ Սերբիայից և Չերնոգորիայից անդադար մարդիկ են ուղարկվում Բօլգարիա, որք գրգռում են ժողովուրդը դէպի ապստամբութիւնը։ Բօլգարների եպիսկոպոսը և մի քանի ուրիշ նշանաւոր անձինք տէրութեան հրամանով բանտարկվեցան իբր ապստամբութեան մասնակիցներ։ Բօլգարիայի խիստ բարեբեր գիւղեր 120 թուով և 110 հազար բնակիչներով, այսօր բոլորովին աւերակ են դարձած... Օսմանեան զօրքը ապստամբների ձեռքից խլել է մի նոր տեսակ թնդանօթ՝ դա չինած է կածր փայտից, կապված երկաթեայ շրջանակով։

***

—

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Սորասբուրգ. մայիսի 22-ին 1876.

Մի քանի ժամանակ առաջ ես կարծեմ առիթ ունեցայ «Մշակի» ընթերցողներին հաղորդելու որ Բերլինի մէջ յունվար ամսին (4-ից մինչև 15-ը) հաւաքվեցաւ մի ժողով, որի նպատակն էր որոշել մի նոր և աւելի պարզ ուղղագրութիւն գերմանական լեզուի համար։ Այս մասնաժողովը, որ կազմված էր Գերմանիայի ամենանշանաւոր լեզուագէտներից, ազգային կրթութեան նախարարի, պ. Ֆալկի առաջարկութեամբ էր հաւաքվել։

Առաջուց ասեմ որ մասնաժողովը թէև նոր ուղղագրութեան համար որոշումներ սահմանեց, բայց ըստ սկզբի անհամաձայնութիւններ ծագելով գիտնականների տարբեր հայեացքների պատճառով, այս որոշումները կարելի չէ իբրև վճռողական ընդունել։

Ես կարճ կերպով կաշխատեմ մեկնել ինչի մէջն էր գլխաւոր տարաձայնութիւնը։ Գիտնականների մի մասը իբրև միակ սկիզբ ընդունել էր կամենում հնչողական (phonetisch) ձևը, այսինքն գրել միայն այն տառերը, որոնք արտասանվում են, առանց ուշադրութիւն դարձնելու, որ ձայնաւորները մի քանի դիպվածում կարող են կարճ կամ երկար արտասանված լինել և այդ վերջին հանգամանքումն է որ գործ է ածվում h (հ) տառը, առանց որ նա հնչվի։ Աւելորդ չէ ասել, որ շատ սակաւ լեզուներ կան, որոնք մեր հայոց լեզուի պէս երկար և կարճ ձայնաւորներ չեն զանազանում։ Հայերէնի մէջ դա անկարելի է, որովհետև ամեն վանկերը մեզանում հաւասար կերպով են շեշտվում։ Ընդհակառակ բօսմանական, սլավօնական և գերմանական լեզուները զանազանում են երկար և կարճ վանկեր։ Բօսմանական լեզուների միջից այդ յատկութիւնը ունեն մանաւանդ հին լեզուները՝ հին յունականը և լատինականը, մինչ որ նոր բօսմանական լեզուներում դա մասամբ կորել է, կամ ենթարկվել է որոշ կանոններին, ինչպէս ֆրանսիական և սպանիական լեզուների մէջ, կամ առանձին շեշտերով է արտայայտվում ինչպէս իտալականի մէջ։ Գերմանական լեզուները ոչ շեշտ են գործածում ոչ էլ որոշ, այսինքն ակներև կանոններ ունեն երկար կամ կարճ վանկերի համար, այնպէս որ դորա մէջ օգնում են շատ անգամ չարտասանվող տառեր ինչպէս գլխաւորապէս h (հ) կամ ձայնաւորներից, օրինակ i (ի) տառի վերաբերութեամբ շատ անգամ նրան երկար արտասանելու համար մի e (է) դորա ետևից է դրվում, որ ինքն չէ արտասանվում այլ միայն i տառը երկարարտասանելի է դարձնում։ Շատ տեղ այս օգնող տառերը անհրաժեշտ են, իսկ հնչողական սկզբի կուսակցութիւնը առաջարկում էր նրանց գործածութենից հեռացնել և եթէ հարկաւոր լինի նրանց տեղ գործածել չեշտերը։

Երկրորդ կուսակցութիւնը, որին պատկանում է և մեր յարգելի պրոֆեսսոր Շերէր (Scherer), ըստ սկզբի ընդդէմ չէ գրութիւնը պարզացնելու, բայց մի և նոյն ժամանակ ցանկանում է պահպանել այնպիսի ուղղագրութիւն, որ առիթ չը տար բոլորովին ամեն կապերը կտրել լեզուի անցեալի հետ, նորա պատմական զարգացման։ Այս ուղղութիւնը, որ իրան իրաւունքով պատմական կուսակցութեան ուղղութիւն է անուանում, բոլորովին իրաւացի է նկատում, որ նոր հնչողական ուղղագրութիւնը մացնելով, շատ տեղ կը կորչեն բոլոր կապերը, որոնք կան արմատի և նորանից ծագած բառերի մէջ և ուրեմն մի լեզուի ուսումնասիրութիւնը աւելի կը դժուարանայ, որքան աւելի պարզ կը դառնայ ուղղագրութիւնը։ Վերցնենք մի քանի օրինակ մեր հայոց լեզուից՝ ինչ կասէիք եթէ մենք բոլորովին կողմ ձգէինք ց կամ ծ տառերի գործածութիւնը և օրինակ գրէինք՝ այց, այցելութիւն և այծ, այծեամն նոյն տառով. դա շատ ծիծաղելի չփոթութիւններ առաջ կը բերէր. կամ ուղղնայինք, որովհետև յ և հ տառերը մեծ մասամբ և գրականական լեզուի մէջ միակերպ են արտասանվում (և միայն մի քանի գաւառներում տարբեր կերպով են հնչվում), դոցանից միայն մինը պահել՝ մենք ակամայ այն կէտին կը հասնէինք որ կը խառնէինք յետոյ, յետ և հետաք, հետևել բառերի արմատները և դորա հետևանքը կարող էր միայն լինել, որ լեզու ուսումնասիրելը էլ աւելի դժուարութիւններ պիտի պատճառէր, քան թէ այժմ պատճառում է մեր լեզուն, որ կարելի է իրաւամբ հնդկա-եւրօպական ամենադժուար լեզուներից մինը համարել։ Լեզու-

ուսումնասիրել ասելով ես չեմ ուզում ասել այդ եզրով միայն խօսել թուղթակի պէս, կամ գուցէ էլ կանոնաւոր կերպով գրել, առանց իրան մեկնել կարողանալու, թէ ինչի այս ինչ բառը այսպէս է գրվում, իսկ միւսը այնպէս։ Իսկ այդ տեսակ մեկնութիւն տալ իրան միշտ հարկաւոր է եթէ մարդս ուզում է լիովին տիրել մի լեզու և ճիշդ, այսինքն իրանց բուն նշանակութեամբ գործածել մի լեզուի բառերի ճոխ պաշարը Սակաւ չէ պատահում, այժմս էլ, որ լեզու բաւական չուսումնասիրելով, գրողները մտցնում են իրանց շարադրութիւնների մէջ բառեր բոլորովին տարբեր մտքով, քան թէ այն բուն նշանակութիւնը, որ նրանք ունեն, և ուրեմն մեղանչում են այսպիսով այն սկզբի դէմ, որ անուանվում է մի լեզուի ոգին և որ չէ նշանակում որ մի լեզու պէտք է անշարժ մնայ, չը զարգանայ,—այլ որ ամեն մի լեզու որոշ, թէկն գուցէ դեռ բաւական չը հետազօտած կանոններ ունի, որոց միջոցով նա զարգացել է թէ իր դաւառական բարբառների մէջ, թէ գրականական ձևերում։ Որքան աւելի առիթ կը լինէր մեզ մեր լեզուի մէջ ամեն կապ և կանոն կորցնելու, եթէ մենք այժմ որոշէինք յանկարծ այլ ևս չը գործածել մեր տառերից մի քանիսներ։

Այդ վտանգը ի հարկէ գերմանական լեզուի մէջ այնքան մեծ չէր կարող լինել, որովհետև այդ լեզուն կարելի է ասել խոր կերպով հետազօտած է իր սկզբից մինչև իր այժմեան դրութիւնը, ուսումնասիրած է իր ամենափոքր բարբառների մէջ. բայց այնու ամենայնիւ մինչև անդամ զարգացած մի լեզուի վերաբերութեամբ չէ կարելի նոր կանոններ ստիպմամբ ընդունել տալ և այսպիսով հերքել նորա կանոնաւոր պատմական զարգացումը։

Այս է պատճառը որ պ. Ֆալկից դրդած մասնաժողովը, որի մանրամասնների վերա խօսել աւելորդ է այստեղ, տարաձայնութիւններով բաժանվեցաւ, իր նպատակին չը հասնելով և կարող է բոլորովին անյաջող համարվել։

Ա. Արծրունի

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վրաց «Դրօէբա» լրագիրը հաղորդում է որ Թիւրքաց տէրութիւնը հրամայել է չը թոյլ տալ այդ լրագրին և Ռուսաստանում հրատարակվող վրաց գրքերին մուտքը Թիւրքաց Վրաստանի կողմերը։

***

Լրագիրները հաղորդում են որ Ֆիլադէլֆիայի աշխարհանդիսի այցելողների թիւը օրից օր աճում է։ Մայիսի 19-ին այցելողների թիւը 16 հազար էր, մայիսի 21-ին՝ 18 հազար։ Ցայտնի է որ ինչպէս Անգլիայում, նոյնպէս և Ամերիկայում սովորութիւն կայ որ կիրակի օրերը հասարակութիւնը զրկված է ամեն տեսակ զուարճութիւններից և իրաւունք չունի նոյնպէս պարապել։ Այդ զարմանալի մոլեռանդութեան պատճառով և աշխարհանդէսը փակված է լինում կիրակի օրերը։ Օտարների շրջանում, որք եկած են Ֆիլադէլֆիա, այդ տեսակ մինչդարեան կարգադրութիւն մեծ դժգոհութիւն է յարուցել։ Կամենում են խնդրել աշխարհանդէսը բացանել և կիրակի օրերը։

***

Մի երիտասարդ երաժիշտ Վարշավայի մէջ մի նոր ձեւ հասարակական դասախօսութիւններ է կարդում։ Նա ընտրել է իր դասախօսութեան առարկայ երևելի գերմանական երաժիշտ-հեղինակ Վագնէրի կենսագրութիւնը և նրա գրվածների նշանակութիւնը։ Երևելի հեղինակի իւրաքանչիւր երաժշտական հեղինակութեան նշանակութեան վրա խօսելուց յետոյ, նա խոյն ածում է պիանօի վրա լսողների առաջ Վագնէրի այս կամ այն հեղինակութեան, կամ օպէրայի նշանաւոր կտորներ,—և գեղեցիկ կերպով ածելուց յետոյ, կրկին չարունակում է դասախօսել։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ։

Մայիսի 8-ից բարձր վարչութեան թոյլտուութեամբ վերցվում է բուբլիանոց հարկի կապալը։ Կապալառուները հեռացրած են գործից և տուրքի հաւաքելը կը կատարվի Թիֆլիսի քաղաքային Ուպրավայի անմիջական կարգադրութիւններով։ Սորա մասին Ուպրավան յայտնում է Թիֆլիս քաղաքի ընդհանուր գիտութեանը։

Մայիսի 30-ին, 1876 թ-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին հրաւիրվում են թէ անձինք որք յայտնել են իրանց ցանկութիւնը անդամներ լինել ԹԻՖԼԻՍԻ ԱՐԻԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ընկերութիւն, թէ նոքա, որք ներքև յիշված կանոնադրութեան § 3 հիման վրա ցանկանում են մտանակցել ընկերութեանը, մի մասնաժողով ընտրելու համար, որ ընկերութիւնը բաց անելու համար պէտք է պատրաստական պարապմունքներով զբաղվի։ Ընկերութեան անդամ կարող են գրվել՝ արվեստաւորներ—տէրերը, կանոնադրութեան § 1 հիման վրա, իսկ ինժէնէրները, արխիտէկտօրները, քիմիքոսները, տեխնիկներ, բժիշկները, տպարանատէրերը, լիտոգրաֆները, ֆոտոգրաֆները և արհեստագէտները, գործանոցների և ֆաբրիկաների տէրերը, և նոյնպէս օտարաքաղաքացի արվեստաւոր-տէրերը, որք իրանց հիմնարկութիւններն ունեն Թիֆլիսում՝ նոյն կանոնադրութեան § 3 հիման վրա։

Ժողովը կը բացվի արվեստաւորների զլխաւոր ուստաբաշու, Ճանաչված 18 համքարների (արվեստաւորների ցեխերի) բոլոր ուստաբաշիների, և ընկերութեան հիմնողների ներկայութեամբ։

Ժողովի տեղը հրաւիրված անձինքների համար կը լինի Թիֆլիսի արվեստագործական ուսումնարանի շենութիւնը, Էկզարխեան հրապարակի վրա, Սինոդական դրասենեակի մօտ, տան № 10, 1 բաժանման 6-որդ շքաջանում, որտեղ այժմ գտնվում է արվեստաւորների վարչութիւնը։

Արվեստաւորների զլխաւոր ուստաբաշի՝
Գերման Վալլինգ

Հիմնողներ՝ Անդրէյ Կապանաձէ, Գրիգոր Գէորգօբիանի, Լուկա Լուցէնկո

Կոստանդնուպօլսեցի հանրածանօթ ատամնաբոյժ պ. ՖՐԱՆԴԻԼ ՄԻԼԻԷՔԵԱՆԸ Եւրոպայից վերադառնալով, դիտաւորութիւն ունի Թիֆլիսի հասարակութեան ծառայելու իւր արհեստը չարունակելով։

Պարոնի իւր արհեստին վերաբերած աջողութիւնները քանի տարի առաջ արդէն յայտնի էին Թիֆլիսի հասարակութեանը, այժմ աւելի կատարելագործված լինելով դովեստները աւելորդ են։

Մինչև այսօր (բացի մասնագէտ բժիշկներից) ատամնաբոյժների գործ դրած կրեօզոդի նման և այլ վնասակար դեղերից և փոշիներից աղատ պահելու համար հիւանդներին, այս անդամ ցաւող ատամների և ընդերքի առողջութեան համար յատկապէս այնպիսի անվնաս և ընդհակառակն օգտակար դեղեր է պատրաստել, որ հարիւրից-իննսունը անշուշտ պէտք է աղատուի ատամը հանելու վտանգից։

Պ. Ֆրանդիլ Միլիէքեանը խոստանում է

1) Բնականից դուրս երկար ատամները կտրել։

2) Կրի նման քարացած սև կեղտոտ ատամները մաքրել, սպիտակացնել՝ իւր բնական գոյնին բերելով և մարգարտի պէս փայլացնել։

3) Շարժվելու պատճառով ծռուած ատամները ուղղել և անբժկելի ատամները կամ նոցա կոտրած արմատները, ամենահեշտութեամբ հանել։

Բացի վերոյիշեալները—ատամները սպիտակ և ընդերքը առողջ պահպանելու համար բժշկական ժողովի վերջին որոշած փոշին ծախում է առանձին տուփերով։

Ցերեկը, նաև գիշերը մինչև լոյս (որ ժամին որ լինի) սաստիկ ցաւող ատամների համար կարող ես գտնել պարոնին Դվորցովի փողոցը, տան պ. պ. Ծովիանեանի և Սառաջովի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցանձնվում է մի ԽԱՆՈՒԹ և 4 ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով։ Կարելի է վեր առնել առանձնապէս խանութը 2 սենեակով։ Այդ խանութի և բնակարանի մասին հարցնել Սօլօլակում, Տօլէի մագազինի դիմաց, Յէյտլինի մօտ

1 (2)

Հաղարներ անձինքներից երկու սեռի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԽԻՆՕԳԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական շատ հեղինակութիւններից փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգերիխտի քիմիայի պրոֆէսօր է և նոյնպէս Մօսկվայի բժշկական վարչութեան թոյլտուութիւն։ Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հետազօտած էր Մօսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը։ Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անդամ մազերից մերկ գլուխները ծածկվում են մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից մինն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատուելի հասարակութենից լաւ ընդունելութեանվրա։

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՐՈՒԲԼ

Իւրաքանչիւր շիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ
„PASTA EUGENIE"

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» այժմ սարքված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕԻ մուղկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Սաավրապօլում պ. ԿՈՒՐԻԼԶԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և մնացած այստեղ յիշված արդիւնքները։ Այդ պօմադը նշանաւորվել նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը խոտակվում է զանազան բիծերից, անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հասակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են խոտակ և տգիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը երաշխաւոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Գրաւական կարող են լինել առնողները համար և այն վկայութիւնների որք ստացված են թէ Վիէննայի քիմիքոս պրոֆէսօր պ. Կլեչինսկուց, թէ Մօսկվայի բժշկական վարչութեան թոյլտուութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի առանձին դրօշմ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներին խնդրումենք ուշադրութիւն դարձնել։

Bertha Ries

Ց. Գ. «Pasta» պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէկն չունեն զանազան վերև յիշված կաշու հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ խոտակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

ՁԵՌՔԵՐԻ ՊՕՄԱԴ

Այդ պօմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութենից հետոյ ձեռքերը ստանում են զարմանալի փափկութիւն և սպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿՔ, թէ մոդ խարտեաշ, թէ սև, որ ներկում է 10 րոպէի միջոցում և չէ կորցնում իր տեսողութիւնը 6 շաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 ռուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հաստատ միջոց կոշտերի և կաշու կոշտութիւնների դէմ։ Սրուակը 60 կ.

18 (50)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԹԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻՋԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։
ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՌԻՄԻՌՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ

Որ մի քանի արտասահմանեան պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենամոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղլինջ, լու և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գլուխերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մօսկվայի բաղմարվեստեան հանդիսում 1872 թ-ին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աշխարհանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille):

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ դեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ. Փոշին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 ռուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապերչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաշխաւոր է գլխաւոր Դէպոյ։

Հատատ միջոց կոշտերի և կաշու կոշտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուղկային մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼԶԷՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փօստի մարկաներով։

18 (50)

Дозволено цензурою 26 Мая 1876 г. Тифлисъ
Типографія Энфіаджіанцъ и К-°
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ